ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 99

«22» 12 202/ թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի N 91 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով, հիմք ընդունելով թիվ 2 կայազորի զինվորական դատախազության և թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի գործունեությունը դադարեցնելու, ինչպես նաև թիվ 3 կայազորի զինվորական դատախազության և թիվ 3 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժինները վերանվանելու հանգամանքը, ինչպես նաև թիվ 2 կայազորի զինվորական դատախազության 3 (կայազորի զինվորական դատախազի 1 թափուր, կայազորի զինվորական դատախազի տեղակալի 1, կայազորի զինվորական դատախազության դատախազի 1) և թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի 2 (բաժնի պետի՝ 1, բաժնի ավագ մասնագետի՝ 1) հաստիքները կրճատելու և ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազի 1, թիվ 1 կայազորի զինվորական դատախազի տեղակալի 1, նույն կայազորի զինվորական դատախազության դատախազի 1, նույն կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի ավագ մասնագետի 2 հաստիք ավելացնելու նպատակով, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի 1 թափուր հաստիքը նույն վարչության պետի տեղակալի 1 հաստիքով, իսկ թիվ 1 կայազորի զինվորական դատախազի տեղակալի 1 թափուր հաստիքը ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2020 թվականի հունիսի 10-ի N 54 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 91 հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ բաժնի 3-րդ գլխի 6-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 1» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 2» բառերով, իսկ 8-րդ կետի «Վարչության դատախազ 3» բառերը՝ «Վարչության դատախազ 2» բառերով,

2) 2-րդ բաժնի 10-րդ գլխի 35-րդ կետի «Վարչության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 11» բառերը՝ «Ընդամենը 12» բառերով,

3) 2-րդ բաժնի 15-րդ գլխի 56-րդ կետի «Վարչության դատախազ 2» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 5» բառերը՝ «Ընդամենը 6» բառերով,

4) 2-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 120***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 122***» բառերով,

5) 5-րդ բաժնի 45-րդ գլխի 168-րդ կետի «Դատախազության դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը 6» բառերը՝ «Ընդամենը 7» բառերով,

6) 5-րդ բաժնի 46-րդ գլխի 171-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 0» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 1» բառերով, 172-րդ կետի «Դատախազության դատախազ 1» բառերը՝ «Դատախազության դատախազ 2» բառերով, նույն գլխի «Ընդամենը 3» բառերը՝ «Ընդամենը 5» բառերով, իսկ վերջում ավելացնել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 83***» բառերը,

7) 5-րդ բաժնի 47-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած,

8) 6-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 120***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 122***» բառերով, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 85***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 83***» բառերով:

2. Հրամանի N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները

1) 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15-րդ կետի «Վարորդ 19» բառերը փոխարինել «Վարորդ 20» բառերով, նույն գլխի «**Ընդամենը 31**» բառերը՝ «**Ընդամենը 32**» բառերով, իսկ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչություն 44***» բառերը՝ «***Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչություն 45***»բառերով,

2) 1-ին բաժնի 25-րդ գլխում «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 133***» բառերով,

3) 4-րդ բաժնի 51-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 51. ԹԻՎ 1 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

202	Բաժնի պետ	1
203	Բաժնի ավագ մասնագետ	2
204	Բաժնի մասնագետ	1
	Ընդամենը	**4**
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
205	Վարորդ-ցրիչ	1
206	Հավաքարար	1
	Ընդամենը	**2**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում	**6**

4) 4-րդ բաժնի 52-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 52. ԹԻՎ 2 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

202	Բաժնի պետ	1
203	Բաժնի ավագ մասնագետ	1
204	Բաժնի մասնագետ	1
	Ընդամենը	**3**
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
205	Վարորդ-ցրիչ	1
206	Հավաքարար	1
	Ընդամենը	**2**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում	**5**
	Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում	**56**

5) 4-րդ բաժնի 53-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած,

6) 5-րդ բաժնի «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 133***» բառերով, իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 57***» բառերը փոխարինել «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 56***» բառերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N 39 և սեպտեմբերի 25-ի N 41 հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 21-ի N 97 հրամանի հետ միաժամանակ:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա. ԴԱՎԹՅԱՆ